ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երևան 2017

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարություն

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ»

որակական հետազոտության արդյունքներ

ԵՐԵՎԱՆ 2017

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել կարիքավոր և խոցելի երեխաներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեության մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել՝ www.unicef.am և www.unicef.org կայքերը կամ հետևել մեզ հետևյալ սոցիալական հարթակներում՝

Facebook.com/UNICEFArmenia

Instagram.com/UNICEF_Armenia

«Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների հիմնական կարիքները» որակական հետազոտությունն իրականացվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) աջակցությամբ իրականացվող «Երեխաների համար արդարադատության մատչելիության ապահովման նպատակով կայուն համագործակցության ընդլայնում» ծրագրի շրջանակում, որն իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Այն ուղղված է հանցագործությունից տուժած երեխաների կարիքների ուսումնասիրմանը, արդարադատության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության բարելավմանը:

Հետազոտության արդյունքները ներկայացնում են փորձագետների, առանցքային տեղեկատուների հետ անցկացված հարցազրույցների վերլուծության ամփոփումը և դրանց հիման վրա ներկայացրած եզրահանգումներն ու առաջարկները:

Հետազոտության աշխատանքային խումբ
Անահիտ Խաչատրյան
Հասմիկ Հովակիմյան
Անի Աղոյան
Միշա Թադևոսյան

Պատասխանատու՝ Գայանե Հովակիմյան
Սրբագրիչ՝ Մանյա Փաշինյան

«Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մովսես Խորենացու 162ա
հեռ. (+37410) 57 44 06
էլ. փոստ: info@lawinstitute.am

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների հիմնական կարիքները» որակական հետազոտությունն իրականացվել է 2017 թվականի հուլիսից մինչ հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող ‹‹Երեխաների համար արդարադատության մատչելիության ապահովման նպատակով կայուն համագործակցության ընդլայնում›› ծրագրի շրջանակներում:

Հետազոտությունն ուղղված է հանցագործությունից տուժած երեխաների կարիքների ուսումնասիրմանը, արդարադատության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության բարելավմանը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ Հայաստանում դեռևս ստեղծման և ներդրման փուլում են հանցագործություններից տուժած երեխաների խնդիրների և օրենքին առնչվելու դեպքում՝ երեխայի լավագույն շահի պաշտպանության կառուցակարգերը:

ՀՀ-ում հանցագործությունից տուժած երեխաների համար հասանելի չեն աջակցման սոցիալական և համայնքային ծառայությունները: Շեշտադրվում է հատկապես հանցագործությունից տուժած երեխաների համար ծառայությունների ապահովման նպատակով մասնագիտացված կենտրոն ունենալու կարևորությունը: Փորձագետների զգալի մասը գտնում է, որ երեխաների մասնակցությամբ վարույթների իրականացման գործերով քննիչների, դատախազների և դատավորների մասնագիտական վերապատրաստումների կարիք կա: Հատկանշական է, որ բոլոր փորձագետներն առանձնացնում են տուժած երեխաների հետ հարցաքննությունների անցկացման ժամանակ հոգեբանների ներգրավման անհրաժեշտությունը հարցաքննությունների, մինչդատական և հետդատական գործընթացում, ինչպես նաև համայնքում երեխայի հետ աշխատանքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ 4
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 5
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
ԳԼՈՒԽ 1. Հետազոտության նպատակը,
խնդիրները և մեթոդաբանությունը 9
ԳԼՈՒԽ 2. Հետազոտության արդյունքների վերլուծություն 11
2.1 ՀՀ-ում հանցագործությունից տուժած երեխաների հիմնախնդիրները երեխայի իրավունքների պաշտպանության համակարգում 11
2.2 ՀՀ-ում հանցագործությունից տուժած երեխաների 2017թ. վերաբերյալ վիճակագրություն 16
2.3 Քրեական դատավարության ընթացքում տուժածների դերի, մասնակցության, իրավունքների իրազեկման պրակտիկան 23
2.4 Քրեական դատավարության ընթացքում տուժած երեխաների իրավունքների պաշտպանության շրջանակում առաջնային հիմնախնդիրները 25
2.5 Հանցագործությունից տուժած երեխաների՝ ծառայությունների հասանելիության և մատչելիության խնդիրները 34
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 39
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 41
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Փորձագիտական հարցման հարցաշար 43

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՆ - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
ՀՀ ԿԱ - Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
ԱՎԾ - Ազգային վիճակագրական ծառայություն
ՔԿ - ՀՀ քննչական կոմիտե
ՔԿՎ - ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչություն
ՔԿԾ – ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ՔԿՀ - քրեակատարողական հիմնարկ
ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
ՅՈՒՆԻՍԵՖ - ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ
ՔԴՕ - Քրեական դատավարության օրենսգիրք
ՔՐ.ՕՐ. - քրեական օրենսգիրք
ԱԳԲ – անչափահասների գործերով բաժանմունք
ՀՈԲ – համայնքային ոստիկանության բաժանմունք

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների հիմնական կարիքները» որակական հետազոտությունն իրականացվել է 2017 թվականի հուլիսից մինչ հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող ‹‹Երեխաների համար արդարադատության մատչելիության ապահովման նպատակով կայուն համագործակցության ընդլայնում›› ծրագրի շրջանակներում:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N646-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Կառավարության 2017-2022թթ-ի ծրագրի «1. Պետական կառավարման և իրավական համակարգ բաժնի» 1.3 Մարդու իրավունքների պաշտպանություն, արդարադատություն և կոռուպցիայի դեմ պայքար» ենթաբաժնի 4-րդ կետով սահմանված դրույթով. Այն է՝ «Անչափահասների արդարադատության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2020 թվականի ավարտը բարեփոխել իրավախախտ, տուժող և վկա երեխաների իրավունքների պաշտպանության և արդարադատության մատչելիության ապահովմանը և երեխայի դատավարություններում մասնակցության կարգավորմանն ուղղված օրենսդրությունը, այդ թվում՝ մինչև 2022 թվականի ավարտը մշակել, փորձարկել և ներդնել արդարադատության ոլորտում իրավախախտ, վկա և հանցագործությունից ու բռնությունից տուժած երեխաների վերականգնման և պաշտպանության ծառայությունների հայեցակարգը»[1]:

Հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների հիմնական կարիքները, նպաստել արդարադատության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի բարելավմանը:

• Ինչպե՞ս է իրականացվում Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների պաշտպանությունը,

• ինչպիսի՞ն է քրեական դատավարության ընթացքում տուժած երեխաների, նրանց ծնողների՝ իրենց իրավունքների ու պարտականությունների, դերի, մասնակցության իրազեկման պրակտիկան,

• որո՞նք են տուժած երեխաների իրավունքների պաշտպանության շրջանակում գործնական ու իրավական առաջնային հիմնախնդիրները՝ նախաքննության և դատաքննության ընթացքում,

• ինչպիսի՞ն է տուժած երեխաների վերաբերյալ ՀՀ վիճակագրությունը, միջազգային փորձի կիրարկման պրակտիկան:

Հետազոտությունն անցկացվել է Երևան քաղաքում և ՀՀ մարզեր (Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի, Արարատի և Վայոց ձորի):

Հետազոտությունն իրականացվել է պետական ու հասարակական ոլորտի փորձագետների, առանցքային տեղեկատուների հետ: Հետազոտության փորձագիտական հարցազրույցներն իրականացվել են անանուն՝ անձնական տվյալների գաղտնիության պահպանման /կոնֆիդենցիալության/ սկզբուն-

[1] http://www.gov.am/files/docs/2207.pdf

քով:

Հետազոտությունը վեր է հանել Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների հիմնական խնդիրները, ներկայացնելու հանցագործությունից տուժած երեխաների հիմնական կարիքները, իրավական կառուցակարգերի անհրաժեշտությունը ու գործնական դաշտում անհրաժեշտ աջակցության ծառայությունների տրամադրման առանձնահատկություններն ու առկա հիմնախնդիրները:

Հաշվի առնելով, որ մինչ այժմ ՀՀ-ում չի իրականացվել որևէ հետազոտություն՝ ուղղված հանցագործությունից տուժած երեխաների խնդիրների վերլուծությանը, հետազոտությունն ունի հետախուզական բնույթ՝ նկարագրելու թիրախային այս խմբի հիմնական խնդիրները: Այս համատեքստում այն ելակետային վերլուծություն է հետագայում առավել երկարաժամկետ և համապարփակ հետազոտություններ կատարելու համար՝ աջակցությունների համակարգային հայեցակարգ ձևավորելու նպատակով:

ԳԼՈՒԽ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների հիմնական կարիքները, նպաստել արդարադատության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի բարելավմանը:

Ելնելով նպատակից՝ հետազոտությամբ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

• ինչպե՞ս է իրականացվում Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների պաշտպանությունը,

• ինչպիսի՞ն է քրեական դատավարության ընթացքում տուժած երեխաների, նրանց ծնողների՝ իրենց իրավունքների ու պարտականությունների, դերի, մասնակցության իրազեկման պրակտիկան,

• որո՞նք են տուժած երեխաների իրավունքների պաշտպանության շրջանակում գործնական ու իրավական առաջնային հիմնախնդիրները՝ նախաքննության և դատաքննության ընթացքում,

• ինչպիսի՞ն է տուժած երեխաների վերաբերյալ ՀՀ վիճակագրությունը, միջազգային փորձի կիրարկման պրակտիկան:

Ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից՝ կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները.

Փորձագիտական, առանցքային տեղեկատուների հարցազրույց

Հաշվի առնելով հետազոտության խնդիրները՝ փորձագիտական հարցազրույցներ են իրականացվել փորձագիտական խմբի, առաջնային տեղեկատուների լայն շրջանակի հետ՝ ապահովելով ամբողջական տեղեկատվության ստացումը: Հարցազրույցներն իրականացվել են հետևյալ կառույցների ներկայացուցիչների հետ՝

• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
• ՀՀ դատական դեպարտամենտ
• ՀՀ դատախազություն
• ՀՀ փաստաբանական պալատ
• ՀՀ քննչական կոմիտե
• ՀՀ ոստիկանություն
• Քաղաքացիական հասարակության կառույցներ /ՀԿ-ներ/

Փորձագետների ընտրությունը

Փորձագետների և առանցքային տեղեկատուների ընտրության հիմքում դրվել է նպատակաուղղված ընտրանքի և ձնակույտի մեթոդը:

Հետազոտությունն իրականացվել է անանուն և արդյունքները ներկայացված են ընդհանրական կերպով:

Հետազոտության փորձագետների և առանցքային տեղեկատուների անձնական տվյալները պահվել են սղագրությունների /ձայնագրությունների/ տեսքով՝ անանունությունը երաշխավորելու նպատակով:

Ընդհանուր առմամբ իրականացվել է թվով 27 փորձագիտական հարցազրույց, 20 պետական կառույցների և 7 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Դեպքերի վերլուծություն

Ուսումնասիրության ընթացքում կատարվել է նաև հանցագործությունից տուժած երեխաների դեպքերի վերլուծություն (case study), որոնց արդյունքներն օգտագործվել և ամփոփվել են հետազոտության եզրակացությունների, առաջարկությունների շրջանակում:

Դեպքերի վերլուծությունից ստացված տեղեկատվությունն օգտագործվել է ընդհանրացված կերպով՝ պահպանելով երեխայի տվյալների գաղտնիության ապահովման սկզբունքը:

Ընդհանուր առմամբ իրականացվել է թվով 5 դեպքի վերլուծություն:

Ընտրանքի ծավալի հիմնավորումը

Սույն հետազոտության մեջ տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր է հանդիսացել փորձագետներից, առանցքային տեղեկատուներից ստացված տեղեկատվությունը և դեպքերի վերլուծությունը: Ընտրանքում ընդգրկվել են ոլորտի փորձագետներն ու առանցքային տեղեկատուները /ընդհանուր 27 անձ/:

Կիրառվել է տեղեկատվության հագեցվածության սկզբունք, երբ փորձագետներից, առաջնային տեղեկատուներից և երեխաների դեպքերի վերլուծությունից ստացված տեղեկատվությունը սկսվել է կրկնվել, տեղեկատվության ստացման գործընթացը դադարեցվել է՝ ներկայացվելով ընդհանրացված տեսքով:

Գործիքի մշակում

Հետազոտության դաշտային աշխատանքների իրականացման համար մշակվել է հարցաշար:

Փորձագետների, առանցքային տեղեկատուների համար նախատեսված հարցաշարը կազմված է 4 հիմնական բաժիններից՝ ընդհանուր հարցեր, հատուկ հարցեր, տեղեկատվություն /միջազգային փորձ/ և առաջարկություններ: Հետազոտության իրականացման համար նախատեսված գործիքը / հարցաշարը/ կից ներկայացված է հավելվածներում:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ներկայացված է ըստ առաջ քաշված նպատակի և խնդիրների: Հաշվի առնելով, որ հետազոտությունն իրականացվել է հարցազրույցների մեթոդով՝ արդյունքների վերլուծության մեջ կիրառվել է ստացված պատասխանների ամփոփումը և վերլուծությունը: Միևնույն ժամանակ, ելնելով նրանից, որ փորձագիտական գնահատականների շրջանակում առանձնակի կարևորվել է նաև փորձագետների անձնական դիրքորոշումները և մոտեցումները, վերլուծության մեջ ներկայացված է նաև այդ դիրքորոշումների ընդհանրական պատկերը, ստացված ոչ միայն փորձագետների տեղեկատվությամբ, այլև ընդհանուր առմամբ փորձագետների կողմից հետազոտության կարևորության, նրանց տրամադրվածության, հարցազրույցների ընթացքում անկեղծության և այլ կարևոր գործոնների համադրմամբ:

ԳԼՈՒԽ 2.1 ՀՀ-ՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շարունակաբար իրականացվող սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների գործընթացի շրջանակներում առանձնակի կարևորվում են երեխաների իրավունքներն ու դրանց պաշտպանությունը, համակարգային աշխատանքներ են ընթանում երեխաների իրավունքների պաշտպանության ամրապնդման ուղղությամբ:

Անչափահասների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերում ներկայացվող պահանջները վերաբերում են ոչ միայն անչափահաս կասկածյալներին և մեղադրյալներին, այլև անչափահաս տուժածներին և վկաներին:

Այս չափորոշիչները ճանաչում են անչափահաս տուժածների խոցելիությունը՝ պայմանավորված վերջիններիս տարիքային, հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկություններով ու որակներով, որոնք պահանջում են նրանց իրավունքների իրականացման լրացուցիչ երաշխիքներ: Այս է նաև պատճառը, որ միջազգային իրավական փաստաթղթերը սահմանում են անչափահաս տուժածների մասնակցությամբ քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման առանձնահատուկ ընթացակարգեր՝ հաշվի առնելով վերջիններիս շահերին առնչվող դատական գործընթացների վերաբերյալ տեղեկացված լինելու և դրանցում ներկայացված լինե-

լու, ինչպես նաև ճնշումներից և վատ վերաբերմունքից նրանց պաշտպանվածության, գործի առանձին հանգամանքների նրանց վրա բացասաբար չանդրադառնալու անհրաժեշտությունը:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 39-րդ հոդվածը սահմանում է, որ անդամ-պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նպաստելու համար դաժան վերաբերմունքի, շահագործման կամ չարաշահման ցանկացած ձևի, խոշտանգումների կամ ցանկացած այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, զինված ընդհարումների զոհ դարձած երեխայի ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը և սոցիալական վերաինտեգրմանը: Նման վերականգնումը և վերաինտեգրումն իրականացվում են երեխայի առողջությունը, ինքնահարգանքը և արժանապատվությունն ապահովող պայմաններում[2]:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին 2002 թվականի կամընտիր արձանագրության (Optional protocol to the Convention on the Rights of the Child on the sale of children, child prostitution and child pornography) 8-րդ հոդվածը սահմանում է, որ անդամ-պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն քրեական արդարադատության բոլոր փուլերում անչափահաս տուժածների ու վկաների իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով: Մասնավորապես, ի նկատի ունենալով անչափահաս տուժածների խոցելի խավ լինելու հանգամանքը՝ պետք է սահմանվեն այնպիսի դատավարական նորմեր, որոնք հաշվի կառնեն անչափահաս տուժածների և վկաների բոլոր հատուկ պահանջները[3]:

Տուժած երեխաների միջազգային պրակտիկայում առկա են զոհակենտրոն մի շարք մոտեցումներ, որոնք, ըստ փորձագետների, կարող են ներդրվել ու արդյունավետ գործարկվել Հայաստանում: Մասնավորապես, առանձնակի ուշադրության է առաջացել «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Լանզարոտեի կոնվեցիայի) վավերացման, Բառնաուս մոդելի ներդրման անհրաժեշտությունը, ինչը կարող է ակնհայտ դրական ազդեցություն ունենալ, նպաստել տուժած երեխաների իրավունքների պաշտպանության բարելավմանը:

Տուժած երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային փորձի պրակտիկան ՀՀ-ում գտնվում է սաղմնային վիճակում. չնայած իրավական համակարգում առկա են մի շարք դրույթներ, որոնց հիման վրա կարելի է զարգացնել պաշտպանության արդյունավետ կառուցակարգեր, այնուամենայնիվ, տուժածների և վկաների պաշտպանության միջազգային չափանիշների հիմնարար ներդրման, երեխայի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ է օրենսդրության համապարփակ վերանայում, դրանց կիրառման հատուկ կառուցակարգեր:

Հանցագործությունից տուժած երեխաների պաշտպանության ապահովման վերաբերյալ փորձագիտական մոտեցումներն ունեն երկու ուղղվածություն, որոնք տարանջատում են օրենսդ-

[2] http://www.ohchr.org/en/professionalinterest/pages/crc.aspx
[3] http://www.ibcr.org/editor/assets/thematic_report/2/2005_compilation_en_1.pdf

րական և դրանցից բխող գործնական խնդիրները:

Իրավական պաշտպանությունը դիտարկելով որպես առաջնային անհրաժեշտություն՝ համակարգը դեռևս չի համապատասխանում միջազգային ընդունված չափանիշներին, ինչն էլ լրացուցիչ խոչընդոտ է գործընթացի արդյունավետ իրականացմանը: Հիմնարար է այն մոտեցումը, որ գործող օրենսդրությամբ նախատեսված են պաշտպանության և անվտանգության երաշխիքներ, աջակցության միջոցներ, այդ թվում՝ տուժած երեխաների համար անվճար իրավաբանական օգնության, սոցիալական աջակցության և հոգեբանական խորհրդատվության երաշխիքներ: Միջազգային օրենսդրության վավերացումը և ներպետական օրենսդրության ձևավորումն օրակարգային է, և բոլոր փորձագետները կարևորում են արագ և արդյունավետ օրենսդրական բարեփոխումները:

«Այստեղ խնդիրը ոչ թե կոնկրետ միջազգային չափորոշիչներն են, այլ այն, թե որքանով կարող ենք դրանք կիրառել. օրինակ՝ քրեական դատավարության մասին օրենսգրքի նախագիծ կա, կամ նոր քրեական օրենսգիրքը, դրանք արդեն 6, 7, 8 տարի է շրջանառության մեջ են, սակայն դեռևս կոնկրետ ժամանակ չկա, թե երբ պետք է ընդունվեն: Այստեղ կարևորը նույնիսկ եղածը արագ ընդունելն ու կիրառելն է»:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

Իրավական փոփոխությունների անհետաձգելիությունը ցույց է տալիս իրավական նորմերի և պրակտիկ զարգացումների միջև եղած էական տարբերությունը, և այդ առումով առաջացած իրավունքի պաշտպանության լուրջ բացերը, որոնք իրավապահ մարմինները չեն կարող իրացնել՝ չունենալով համապատասխան օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

Այնուամենայնիվ, փորձագիտական երկրորդ ուղղությունը շեշտադրում է նաև օրենսդրության կիրարկումը: Հանցագործության տուժած երեխաների հետ առնչվող մասնագետների կողմից կարևորվում է միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրության ձևավորումը և դրա իմպլեմենտացիան, գործնական հմտությունների և ընթացակարգերի բարելավումը:

«Մենք բավականին շատ միջազգային փաստաթղթերի վավերացմանն ենք մասնակցել իրավական հարթությունում, իհարկե և՛ տեղական, և՛ միջազգային օրենքների հետ կապված շատ բաների հետ համաձայն ենք, մի մասի հետ էլ տարուներ ունենք՝ մշակույթային առանձնահատկություններով պայմանավորված»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Հայաստանում տուժած երեխաների իրավունքների պաշտպանության գործընթացը մեկնարկային փուլում է, ներգրավված մարմինները ոչ միշտ են կարողանում արագ և արդյունավետ արձագանքել դեպքերին և իրականացնել երեխայի շահի պաշտպանություն: Այս առումով բավականին էական է տուժած երեխաների իրավունքների պաշտպանության իրականացման գործընթացում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մասնակցությունը, որի գործունեությունը պրակտիկայում առաջ է բերում մի շարք խնդիրներ՝ հատկապես տուժածների պաշտպանության դեպքում.

«Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն աշխատում են կամավորության սկզբունքով և նույնիսկ տվյալ համայնքի համար իրենց գործողությունները շատ հստակ չեն, չունեն հոգեբան մասնագետ: Հատկապես խնդիր ենք ունենում, թե ինչպես դիմել իրենց տուժած երեխայի դեպքում»:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

Փաստացի, հանցագործությունից տուժած երեխաների իրավական պաշտպանությունը մասնակի է իրականացվում, քանի որ պետական մարմինները սկսում են երեխայի իրավունքներով զբաղվել միայն նրա հանցագործության զոհ դառնալուց կամ հանցագործություն կատարելուց հետո և զուտ դատավարական կարգավիճակով պայմանավորված, իսկ վարույթի ավարտից հետո որևէ մարմին պատշաճ հսկողություն չի իրականացնում անչափահաս տուժածի հոգեկան և ֆիզիկական վիճակի նկատմամբ:

«Մեր մոտ համակարգը այնքան էլ չի համապատասխանում միջազգային ընդունված չափանիշներին ... չկան հոգեբանական ծառայություններ, որոնք կաշխատեն երեխաների հետ .... որ այդ կրկնազոհացումը չլինի»:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

Այս առումով ակնհայտ է, որ տուժած երեխաների համար ստեղծված են պաշտպանության միջոցներ, և իրավական համակարգի անկատարությունը բերում է ծառայությունների մատուցման, մասնագետների ներգրավվածության մի շարք գործնական խնդիրների.

«Երեխաները արդյո՞ք ստանում են համայնքներում ծառայություն, կարծում եմ, որ նման ծառայություններ երևի թե չկան, եթե չասենք՝ մեկ-մեկ, և երևի դրանք ՀԿ-ներն են: Կարծում եմ, որ պետական մոտեցում պետք է լինի: Հատկապես երեխաների հետ աշխատանք պետք է իրականացվի»:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

«Երեխաներն, իհարկե, որոշակիորեն պաշտպանվում են, սակայն պարզ չէ՝ եթե ունենում են որոշակի կարիքներ, չգիտեմ՝ հոգեբանական, սոցիալական և այլն, միանշանակ տրվո՞ւմ է համապատասխան աջակցություն»:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

Ընդհանուր առմամբ տուժած երեխաների պաշտպանության խնդրի վերլուծությունը նաև դժվար է եղել գնահատել այն առումով, որ փորձագետների մոտ առկա է ինչպես տեղեկատվության, այնպես էլ վիճակագրության պակաս: Համակարգի վերաբերյալ ամբողջական գնահատողական պատկերացում կազմելու համար փորձագետների որոշ մասը նշել է, որ նախ անհրաժեշտ է այդ հարցի շուրջ իրականացնել առանձին ուսումնասիրություններ, իսկ քանի որ վերջինս չեն իրականացվել, հետևաբար եղած վիճակագրությամբ գնահատելը շատ դժվար է:

«Իմ կարծիքով, առանձին ուսումնասիրություն է պահանջում այդ խնդիրը, որպեսզի այդ հարցի շուրջ որոշակի պատկերացում ունենանք, որովհետև հանցագործությունից տուժած երեխաների պաշտպանության խնդիրը չի ավարտվում դատական քննությամբ, հետդատական պրոցեսների խնդիրն առավելապես կարևոր է»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Այսպիսով, հանցագործությունից տուժած երեխաների պաշտպանության խնդրի արդիականության և կարևորու-

թյան վերաբերյալ փորձագետների մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը դեռևս ձևավորման փուլում է, առկա են որոշակի իրավական հիմքեր ու ընթացակարգեր, սակայն անհրաժեշտություն կա դրանք ամբողջացնել և համապատասխանեցնել միջազգային իրավական նորմերին ու մոտեցումներին: Հանցագործությունից տուժած երեխաների շահերի պաշտպանության աշխատանքը դեռևս ամբողջությամբ գիտակցված և արտացոլված չէ երեխայի իրավունքների պաշտպանության համակարգում, այս երեխաների խնդիրները մասնագիտական և փորձագիտական շրջանակներից դուրս չեն գալիս, ընտանիքը, համայնքը տեղեկացված չէ և շահագրգիռ չէ խնդիրը հրապարակային դարձնել, առկա չէ ջատագովության և շահերի պաշտպանության մոտեցում և ծրագիր: Առկա չէ որևէ հիմնարար հետազոտություն, որը մասնագիտական շրջանում խնդրի առաջ քաշման հիմք է, տեղեկատվությունը ձևավորվում է հիմականում դեպքից դեպք՝ հիմնականում լրատվության միջոցով անդրադառնալով երեխայի հետ կատարված դեպքին՝ դրանով նաև վնասելով երեխային, սակայն հարցը դեռևս հանրային քննարկման, այդ թվում՝ մասնագիտական լայն շերտերի քննարկման առարկա չէ:

Այս առումով, համակարգի ընթացակարգային առանձնահատկությունների, մասնագետների ներգրավվածության և շահերի պաշտպանության լրացուցիչ հետազոտությունների հետագա անհրաժեշտություն կա, որի հիման վրա հնարավոր է առաջ քաշել օրենսդրական փոփոխություններ, ծառայությունների մատչելիության և անձնակազմի մասնագիտացման հարցերի համակարգային լուծումներ:

ԳԼՈՒԽ 2.2 ՀՀ-ՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ 2017թ. ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանցագործությունից տուժած երեխաների վերաբերյալ միասնական վիճակագրություն Հայաստանում առկա չէ, չկան օրենքով սահմանված միասնական վիճակագրության ցուցիչներ և դրանց հավաքագրման և վերլուծության համար պատասխանատու կառույցներ: Այնուամենայնիվ, դրական միտում կա, որ վերջին տարիներին նման տեղեկատվություն հավաքագրվում է առանձին կառույցների կողմից, որը հնարավորություն է տալիս իրականացնելու նաև վերլուծություններ: Փորձագետների մեծամասնության կողմից որպես վիճակագրությունը բարելավելու գործիք՝ առաջարկվում է կիրառել միջազգային պրակտիկայում արդարադատության ոլորտում երեխաների վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության ցուցիչները, որոնք արտացոլված են նաև ՄԱԿ[4]-ի համապատասխան կառույցների կողմից մշակված ուղեցույցում: Ներկայացված ցուցիչների մի մասով վիճակագրությունն արդեն իսկ առկա է և անհրաժեշտություն կա նաև այդ տեղեկատվության փոխանակման: Այս առումով կարևորվում է համագործակցության զարգացմանը համատեղ ձևավորել տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վիճակագրության վարման հստակ ընթացակարգեր:

Փորձագետների կարծիքով և առկա վիճակագրության վերլուծությամբ պարզ է, որ երեխաների նկատմամբ հանցագործությունների աճի միտում կա. տարեցտարի երեխաների նկատմամբ իրականացվող հանցագործությունների թիվն աճում է: Ստորև ներկայացված է 2017թ.-ի առաջին կիսամյակում ըստ հանցատեսակների երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների, ըստ քրեական գործերի վիճակի, որպես մեղադրյալ/կասկածյալ անձանց տարիքային կազմի, կրթական մակարդակի, որպես տուժածներ ներգրավված անձանց տարիքային կազմի վերաբերյալ տեղեկատվությունը, որը կազմվել է ՀՀ ՔԿ-ի կողմից 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում երեխաների նկատմամբ կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության արդյունքների մասին հաշվետվության հիման վրա:

[4] https://www.unodc.org/pdf/criminal_justice/Manual_for_the_Measurement_of_Juvenile_Justice_Indicators.pdf

Աղ. 1,2,3,4-ում նշված տեղեկատվությունը կազմվել է

ՀՀ Քննչական կոմիտեի կողմից 2017թվականի առաջին կիսամյակի ընթացքում երեխաների նկատմամբ կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության արդյունքների մասին հաշվետվության հիման վրա



Աղ.1.- 2017թ.-ի առաջին կիսամյակում Երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունները ըստ հանցատեսակների
/139 քրեական գործ/

39քր.գրծ.	Քր.օր-ի 141-րդ հոդված (Սեռական հարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ)	3քր.գրծ	Քր.օր-ի 117-րդ հոդված (Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը)
14քր.գրծ	Քր.օր-ի 118-րդ հոդված (Ծեծը)	3քր.գրծ	Քր.օր-ի 132.2-րդ հոդված (Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը)
9քր.գրծ	Քր.օր-ի 138-րդ հոդված (Բռնաբարությունը)		
8քր.գրծ	Քր.օր-ի 173-րդ հոդված (Ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը)	3քր.գրծ	Քր.օր-ի 137-րդ հոդված (Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը)
6քր.գրծ	Քր.օր-ի 112-րդ հոդված (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը)	2քր.գրծ	Քր.օր-ի 139-րդ հոդված (Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները)
6քր.գրծ	Քր.օր-ի 142-րդ հոդված (Անառակաբարո գործողությունները)	2քր.գրծ	Քր.օր-ի 165-րդ հոդված (Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը)
4քր.գրծ	Քր.օր-ի 131-րդ հոդված (Մարդուն առևանգելը)	1քր.գրծ	Քր.օր-ի 104-րդ հոդված (Սպանությունը)
4քր.գրծ	Քր.օր-ի 110-րդ հոդված (Ինքնասպանության հասցնելը)	1քր.գրծ	Քր.օր-ի 120-րդ հոդված (Անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը)
4քր.գրծ	Քր.օր-ի 113-րդ հոդված (Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը)	1քր.գրծ	Քր.օր-ի 170-րդ հոդված (Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը)
3քր.գրծ	Քր.օր-ի 109-րդ հոդված (Անզգուշությամբ մահ պատճառելը)	26քր.գրծ	Այլ



65 անձանցից 5-ը նախկինում եղել են դատապարտված



Աղ.3. 2017թ.-ի առաջին կիսամյակում որպես մեղադրյալ/կասկածյալ անձինք /Տարիքային կազմ, կրթական մակարդակ/



65 անձանցից 5-ը նախկինում եղել են դատապարտված



Աղ.3.- 2017թ.-ի առաջին կիսամյակում որպես մեղադրյալ/կասկածյալ անձինք /Տարիքային կազմ, կրթական մակարդակ/



Աղ.4.- 2017թ.-ի առաջին կիսամյակում որպես տուժողներ ներգրավված անձինք
/112 տուժող/
Տարիքային կազմ

ԳԼՈՒԽ 2.3 ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ԴԵՐԻ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Տուժած երեխաների և նրանց ծնողների քրեական դատավարությունում իրենց դերի, մասնակցության, իրավունքների իրազեկման խնդրի կարևորության և արդիականության վերաբերյալ փորձագետների գնահատականները միմյանցից տարբերվում են: Հատկապես զգալի տարբերություն կա պետական ոլորտից ներգրավված փորձագետների և քաղաքացիական հասարակության ոլորտի փորձագետների մոտեցումների միջև՝ իրազեկման պրակտիկայի հետ կապված:

Ընդհանուր առմամբ, հանցագործության տուժած երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության աստիճանը ցածր է՝ կապված իրավական կարգավորումների ոչ բավարար լինելու, պատկան մարմինների նկատմամբ անվստահության, դեպքը վարող մասնագետի ոչ բոլոր դեպքերում անհատական մոտեցման հետ: Փորձագետների զգալի մասը համարում է, որ խնդիրը համակարգային լուծման կարիք ունի.

> *«Չեմ կարծում, որ շատ իրազեկ են. անվստահություն կա իշխանության, ոստիկանության, դատական համակարգի նկատմամբ: Այն ծնողը, որ կարող է հայտնվել այդ իրավիճակում, իրազեկ չէ ուր են գնալու, ում են ասելու իրեն օգնելու համար, այդ ուղղորդման կարգը ինչպես է լինելու, ես կարծում եմ, որ շատ քիչ են տեղեկացված»*
>
> *Մեջբերում փորձագետի խոսքից*
> *ՀԿ ներկայացուցիչ*

Մյուս կողմից՝ պատկան կառույցների ներկայացուցիչ փորձագետների հիմնական մասը նշում է, որ յուրաքանչյուր կառույց իր վարույթի փուլում ունի իրազեկվածությունն ապահովող իրեն բնորոշ տարբեր մեխանիզմներ: Այդ մեխանիզմների իրագործումը հիմնավորված է ինչպես գործող իրավակարգավորումներով, այնպես էլ տվյալ վարույթն իրականացնող անձի կողմից զոհակենտրոն մոտեցմամբ:

> *«Ուղարկվում են հուշագրեր, հուշաթերթիկներ, որոնց մեջ նշված են իրենց իրավունքները և պարտականությունները՝ նշված քրեական գործով դատաքննության ընթացքի վերաբերյալ».... կամ ....*
> *«Նախաքննական մարմնի կողմից երեխային՝ իրեն հասկանալի լեզվով, ծնողին՝ իրեն հասանելի եղանակով բացատրվում է դատավարության ընթացքը, նրանց կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները»:*
>
> *Մեջբերում փորձագետի խոսքից*
> *Պետական կառույցի ներկայացուցիչ*

Փորձագիտական մոտեցման համաձայն՝ ոչ համաչափ իրազեկվածությունը պայմանավորված է միասնական իրազեկման մեխանիզմների բացակայությամբ: ՀՀ-ում տարբեր տարածաշրջաններում իրազեկվածության մակարդակը կարող է լինել տարբեր՝ պայմանավորված մարզային ծառայությունների առկայությամբ, քանզի առանձին կազմակերպություններ, ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ իրազեկման մի շարք ծրագրեր ունեն, աշխատում են շահառուների տարբեր խմբերի հետ, որից ելնելով էլ առկա է իրազեկման անհատական պրակտիկա:

«Մի կազմակերպություն կարող է ծրագիր ունենալ ինչ որ մի մարզում, կամ նույնիսկ ոչ ամբողջ մարզում, այլ մի քանի համայնքում, երեխաների հետ կհանդիպեն, կխոսեն, իրավական գիտելիքներ կտան և այլն, բայց դա չի նշանակում, որ մեր ամբողջ հանրապետությունը այդ ծրագրերով ծածկվում է, այստեղ պետական քաղաքանություն է հարկավոր»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Մյուս կողմից փորձագետների մի մասը գտնում է, որ առաջընթաց է գրանցվել ընդհանուր իրազեկման առումով, որը նաև անդրադառնում է այս գործընթացում երեխաների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման գործընթացի բարելավմանը:

«Իրավունքների պարզաբանման առումով վերջին տարիներին բավականին լուրջ առաջընթաց կա, եթե նախկինում ինչ որ բացեր կային, կարող է մոլորեցնեին ծնողին և երեխային իրենց իրավունքների մասին չասեին, հիմա ես, համենայն դեպս, իմ պրակտիկայում այդպիսի դեպքեր չեմ տեսնում»:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

Մասնագետները նաև կարևորում են ընդհանուր իրազեկման միջոցով հանցագործությունների կանխարգելումը, քանի որ դա հնարավորություն կտա խուսափել կրկնազոհացումից, կանխել նոր հանցագործություններ:

Հետազոտությունը ցույց է տվել, որ կոնկրետ գործի շրջանակում հիմնականում երեխաներն իրազեկ են լինում իրենց դերի, իրավունքների, պարտականությունների մասին, համապատասխան մարմինների կողմից մոտեցումից, քանի որ ընդհանուր համակարգը տուժածահեն չէ, և երբեմն տրվող տեղեկատվությունը հասանելի չէ երեխային և ծնողին:

«Դա կախված է կոնկրետ մարդկանցից, թե ով է վարում գործը. շատ պարտաճանաչ քննիչներ ու դատավորներ կան, ովքեր իրենք անձամբ երեխային ընդունում են, ամեն ինչ ներկայացնում են, ու մեկ-մեկ իրենք այդքան էլ ուշադրություն չեն դարձնում երեխաներին, ու առհասարակ տուժածներին»

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Այս առումով, կարևորվել է ընդհանուր իրավագիտակցության բարձրացման խնդիրը, որից ելնելով՝ առաջարկվել է հանրակրթության շրջանակում իրավունք առարկայի մատչելի ուսուցանումը, նոր մոտեցումներով և հասանելի երեխային, երեխաների շրջանում՝ տարբեր իրավիճակների ստեղծմամբ խաղային ուսուցման կազմակերպումը:

Այսպիսով, քրեական վարույթում իրենց դերի, մասնակցության, իրավունքների ու պարտականությունների մասին տուժած երեխաների, նրանց ծնողների իրազեկվածության աստիճանը ցածր է, որը պայմանավորված է մի կողմից՝ առհասարակ իրավագիտակցության ոչ բավարար լինելու, որոշ դեպքերում՝ իրավապահ մարմինների նկատմամբ անվստահության, ծնողների կողմից անձնական նախաձեռնողականության պակասի, ընտանիքի ընդհանուր զարգացման մակարդակի, երբեմն ծնողի գիտակցված մերժման հետ, իսկ մյուս կողմից նաև՝ կապված իրավական կարգավորումների ոչ բավարար լինելու, անհատական մոտեցման, տուժածահեն քաղաքականության համակարգային մոտեցման բացակայության հետ:

ԳԼՈՒԽ 2.4 ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Անդրադառնալով քրեական դատավարության ընթացքում տուժած երեխաների իրավունքների պաշտպանության շրջանակներում առաջնային հիմնախնդիրներին՝ պետք է նշել, որ առկա հիմնախնդիրները դիտարկվել են ինչպես քրեական դատավարության ընթացքում, այնպես էլ՝ դատավարությունից հետո:

Քրեական դատավարության ընթացքում առաջնային հիմնախնդիր է համարվում ոչ իրավապահ կառույցների մասնագետների ներգրավվածության անհրաժեշտությունը: Ընդ որում՝ առաջին հերթին դիտարկվում է հոգեբանի մասնակցության անհրաժեշտությունը, հոգեբանի կամ սոցիալական աշխատողի մասնակցությունն անչափահասի հարցաքննությանը և դատավարությանը:

«Կարևոր է հոգեբանի մասնակցությունը, ու ինչքան էլ փորձառու լինի քննիչը, եթե տուժածը երեխա է, ապա անհրաժեշտ է հոգեբան, ով կարող է ավելի լավ ապրումակցել, հատկապես սեռական բռնությունների դեպքում»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Հոգեբանի մասնակցության անհրաժեշտությունը դիտարկվել է ինչպես բուն դատավարության ընթացքում, այնպես էլ մինչվարույթային, մինչդատավարական աշխատանքների փուլում, որպես երեխային հետ «նախապատրաստական» աշխատանքներ իրականացնող:

«Շատ դեպքերում երեխայի տարիքից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում հոգեբանի նախնական աշխատանքի, որպեսզի անչափահասը գոնե պատկերացնում ունենա, թե ուր է գնում և ինչի համար, քանի որ հիմնականում անչափահաս տուժածները դատարանում լինում են կաշկանդված, անհնարավստահ, բարդութավորված: Տուժած երեխաները, չնայած նաև դռնփակ լինելու հանգամանքին, ցուցմունք տալու առումով կրկին հոգեբանական խնդիրներ են ունենում»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Երեխաների հետ առնչվող գործերում հոգեբանի մասնակցությունն անհրաժեշտ է քրեական դատավարության ողջ ընթացքում: Դա կարող է նպաստել առաջին հերթին երեխայի լավագույն շահի ապահովմանը, ինչպես նաև գործընթացի արդյունավետ իրականացմանը:

Պետք է նշել, որ ձևավորված փորձագիտական դիրքորոշումն ամբողջությամբ բխում է միջազգային լավագույն պրակտիկայից և առկա չափորոշիչներից:

«Ես միշտ հոգեբանի եմ ներգրավում, որովհետև երեխաները տարիքային հոգեբանական մի շարք առանձնահատկություններ ունեն, իսկ հոգեբանի գիտելիքները այդ մասին օգտագործվում են հարցաքննության ընթացքում: Ես շատ կուզեի, որ հոգեբանը արձանագրության վերջում ինչ որ կերպ ներկայացներ իր կարծիքը երեխայի վերաբերյալ, որը կարևոր օժանդակություն կլիներ քննիչին:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Այս առումով, բավականին գնահատելի է, որ և՛ քննչական մարմիններում, և՛ արդարադատության համակարգում, դատական համակարգում առկա է բավականին առաջադեմ մարդկային ներուժ, որն օրենսդրական փոփոխությունների դեպքում՝ արագ կիրագործի կարևորվող մասնագետների ներգրավումը գործին:

Այսպես, ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 2005/20 բանաձևի (Ուղեցույց անչափահաս տուժածների և վկաների մասնակցությամբ քրեական գործերով արդարադատության վերաբերյալ) (ECOSOC Resolution 2005/20 Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime) 24-րդ կետն ուղղակիորեն նախատեսում է, որ անչափահաս տուժածերն ու վկաները պետք է ստանան **օժանդակ անձանց օգնությունը**, ինչպիսիք կարող են լինել, օրինակ, անչափահաս տուժածների կամ վկաների հոգեբանությունն ուսումնասիրած մասնագետները (հոգեբաններ). վերջիններս գործին պետք է ներգրավվեն անչափահաս տուժողի և վկայի ներգրավվածության սկզբնական պահից և իրենց լիազորությունները շարունակեն մինչև նմանատիպ ծառայության անհրաժեշտության բացակայությունը:

Գործի վարույթին ներգրավված մասնագետներից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի **թե՛ մինչդատական, թե՛ դատական քննության փուլերում** երեխաների համար հեշտ և անվտանգ լինի ցուցմունքներ տալը կամ ապացույցներ ներկայացնելը, ինչպես նաև շփումը դատավարության տարբեր մասնակիցների հետ: Այս միջոցառումները մասնավորապես պետք է ներառեն.

- մասնագետները պետք է ուշադիր լինեն երեխաների հատուկ պահանջների նկատմամբ,
- օժանդակող անձինք, ներառյալ մասնագետները և ընտանիքի անդամները պետք է ուղեկցեն երեխաներին հարցաքննության ընթացքում,
- անհրաժեշտության դեպքում երեխայի իրավական շահերը պաշտպանելու համար դիմեն իրավաբանի օգնությանը (25-րդ կետ)[5]:

Նույն բանաձևի 31-րդ կետը սահմանում է, որ վարույթն իրականացնող մարմինների կողմից պետք է միջոցներ ձեռնարկվեն նաև անչափահաս տուժածների կամ վկաների **հարցաքննությունների քանակի հնարավորինս կրճատման** նպատակով[6]:

Մանկավարժի կամ հոգեբանի մասնակցության պարտադրության մասին նորմեր է պարունակում նաև *«Անչափահաս տուժածների և վկաների մասնակցությամբ քրեական գործերով արդարադատության վերաբերյալ»* մոդելային օրենքը, որը մշակվել է 2009 թվականին ՄԱԿ-ի SU -ի 2005/20 բանաձևի հիման վրա: Մասնավորապես, մոդելային օրենքի առաջին գլխի (e) ենթակետում «օժանդակող անձանց» հասկացությունը բացատրվում է որպես հատուկ գիտելիքներ ունեցող, վերապատրաստված այն անձինք, ովքեր պետք է օժանդակեն անչափահաս տուժածներին և վկաներին **դատավարության ողջ ընթացքում**՝ այն նպատակով, որ կանխեն ձգձգումների, երկրորդ զոհացման կամ կրկնազոհացման (revictimization or secondary victimization) վտանգը:

Տուժած երեխաների հետ աշխատանքում առանձնակի կարևորվել է

[5] http://www.un.org/en/ecosoc/docs/2005/resolution%202005-20.pdf
[6] http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/guidelines_justice_inv_child.shtml

մասնագիտացված մարմինների, մասնավորապես՝ երեխաների հետ աշխատանքում մասնագիտացած քննիչների, դատավորների, դատախազների անհրաժեշտությունը, ինչպես նաև վերոնշյալ մարմինների մոտ երեխայի հետ աշխատանքի լիազորության առկայությունը:

«Քրեական արդարադատության մարմիններում պետք է ունենանք մասնագիտացած քննիչներ, հետաքննիչներ, դատախազներ, դատավորներ, ովքեր գիտեն ինչ է նշանակում անչափահաս, գոնե մի քիչ նեղ մասնագիտական վերապատրաստում անցնեն, որպեսզի վնաս չհասցնեն»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Միջազգային փորձում «Անչափահաս տուժածների և վկաների մասնակցությամբ քրեական գործերով արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքի 13-րդ հոդվածով պահանջվում է, որ անչափահասների ներգրավվածությամբ քրեական գործերի քննությունն իրականացվի հատուկ վերապատրաստված քննիչի կողմից, ով հարցաքննություններն իրականացնելիս անչափահասների նկատմամբ կցուցաբերի հատուկ մոտեցում:

Կարևորելով երեխայի հետ աշխատանքում մասնագիտացված լինելու հանգամանքը, փորձագետների զգալի մասը առաջարկել է իրականացնել վերապատրաստումներ ու վերարտակավորումներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Քրեական դատավարության ընթացքում տուժած երեխաների հետ աշխատանքում մյուս հիմնախնդիր է դիտարկվել երեխաների հետ իրականացվող հարցաքննությունը:

«Ինչ որ մեկը պետք է սովորեցնի՝ ինչպես պաշտպանել երեխային. տարբերություն կա՞ երեխայի շահ, թե՞ մեծահասակի շահ քրեադատավարության ընթացքում, շատ մեծ տարբերություն կա»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Միջազգային փորձում ևս առանձնակի ուշադրություն է դարձվում տուժած երեխաների հետ հարցաքննության առանձնահատկություններին: Մասնավորապես՝ «Անչափահաս տուժածների և վկաների մասնակցությամբ քրեական գործերով արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքի 25-րդ հոդվածում խոսվում է այն միջոցառումների մասին, որոնք դատարանն իր նախաձեռնությամբ, անչափահաս տուժածի կամ վկայի, նրանց օրինական ներկայացուցիչներից մեկը, մանկավարժի կամ փաստաբանի միջնորդությամբ պետք է կիրառվի երեխայի ֆիզիկական կամ հոգևոր առողջությունը պահպանելու նպատակով: Այդ միջոցառումների շարքին են դասվում հարցաքննությունների տեսաձայնագրումը, հարցաքննությունն այլ վայրում՝ տեսակապի միջոցով իրականացնելը, նախկինում արդեն տեսաձայնագրված ցուցմունքի ցուցադրումը:

Պրակտիկան նույնպես ցույց է տվել, որ երեխաների մասնակցությամբ հարցաքննություններն անդրադառնում են երեխայի հոգեկան առողջության վրա, երեխան կրկնակի անգամ ենթարկվում է սթրեսի:

Չնայած խնդրի գիտակցմանը՝ հաճախ իրավապահ մարմինները հարցաքննություն են իրականացնում նույն երեխայի հետ մի քանի անգամ:

«Շատ հաճախ տուժած երեխան, ստիպված է լինում անցնել մի քանի գերատեսչական օղակներով, դեպքի նկարագրությունը պատմելով թե՛ ոստիկանությանը, թե՛ քննիչին, անցնում է հետաքննություն դատախազությունում, դրան զուգահեռ իրականացվում է երեխայի դատաբժշկական փորձաքննություն ու երեխան տևական ժամանակ ենթարկվում է սթրեսների, նույն գործընթացն իրականացվում է տարբեր մարդկանց մոտ, տարբեր միջավայրերում:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

Որոշ փորձագետներ նաև նշել են, որ դեռևս կա նաև այլ պրակտիկա՝ *«տուժած երեխան կարող է մի քանի ժամ շարունակ հարցաքննվել, բացի այդ, օրինակ տղա երեխաները չեն ուզում պատմել, այսինքն, չակերտավոր ասած «գործ տվող» չլինել»*:

«Քննության ընթացքում դժվար է փոքր տարիքի, դեռահասների հետ աշխատելը. դժվար է, քանի որ իրենց հետ երբեմն 1 կամ 2 հարցաքննությունով չես բավարարվում, հաճախ տարբեր կերպ են ներկայացնում իրադարձությունները: Փորձում ենք քիչ ենթարկել տրավմայի, քիչ կանչել հարցաքննության»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Մյուս կողմից՝ տուժած երեխաների հետ աշխատանքում առկա դժվարությունները պայմանավորված են նաև երեխաների տարիքային, հոգեբանական առանձնահատկություններով.

«Երեխաների հարցաքննությունների ժամանակ շատ զգուշավոր պետք է լինել, երեխաները մի քիչ այլ ձևով են ընկալում իրականությունը, և միգուցե այն բարդ բառերը, որոնք մենք օգտագործում ենք, փոքրահասակ երեխաների համար կարող է բացարձակապես հասանելի չլինել»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Հատկապես, նշվել է, որ քրեական վարույթի ընթացքում երեխաների հետ հաղորդակցումը բարդ է առաջին հանդիպման ժամանակ՝ կապված երեխայի հետ առաջնային շփման (կոնտակտի) հաստատման դժվարությունների հետ. տուժած և վկա երեխաների լավագույն շահի պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով՝ առաջ է քաշվել նաև հարցաքննության իրականացումն ամբաստանյալի բացակայությամբ, երեխայի հարցաքննության տեսաձայնագրության վերարտադրությամբ:

«Այն դժվարությունները, որոնք առկա են քննիչի մոտ երեխայի հետ կապված, կարծում եմ, որ ունեն նաև դատավորները, երբ երեխան քեզ մոտ առաջին անգամն է, ու դատարանում չգիտի ինչպես իրեն պահել»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Բավականին տարակարծիք է դրսևորվել մեկ այլ խնդիր, հարցաքննությանը մանկավարժի ներգրավվածության հարցը: ՀՀ ՔԴՕ 207–րդ հոդվածի համաձայն՝ «Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժածի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ»:

«Օրենսդրությունը նախատեսում է մանկավարժի ներկայություն, բայց օրինակ «Առողջ ապրելակերպ» առարկայի ուսուցչի ներգրավվածությունը որքանով կլինի արդյունավետ, կամ գուցե այլ մանկավարժ ինչ պետք է անի, եթե ոչ միայն լուռ նստի»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Պրակտիկայում մինչև 16 տարեկան վկայի կամ տուժածի հարցաքննության ժամանակ որպես մանկավարժ ներգրավվում է նրա դպրոցական ուսուցիչը: Որոշ փորձագետներ գտնում են, որ դպրոցական ուսուցիչների մասնակցությունը դատավարությանը կաշկանդում է անչափահասներին և դժվարություն-

ներ ստեղծում հետագայում նրանց վերաինտեգրմանը: Մանկավարժի ոչ հիմնավորված ներգրավվածությունը փորձագետների կողմից մեկնաբանվել է երկու տեսանկյունից: Փորձագիտական կարծիքի համաձայն՝ մանկավարժի ներկայությունը կրում է ձևական բնույթ՝ հաճախ ավելի ռիսկային դարձնելով իրավիճակը՝ դիտարկվելով որպես լրացուցիչ խոչընդոտ.

Փորձագիտական մյուս կարծիքի համաձայն՝ մանկավարժի ոչ հիմնավորված և ոչ արդյունավետ, երեխայի շահերից չբխող մասնակցությունը պայմանավորված է գործընթացի ոչ կանոնակարգված լինելու, մանկավարժի համապատասխան մասնագիտական հմտությունների բացակայության հետ.

«Ես գտնում եմ՝ մանկավարժի ներկայությունն այդքան էլ ճիշտ չէ, որովհետև մանկավարժն, ըստ էության, ոչնչով չի օգնում, ուղղակի ներկա է գտնվում, և որպես կանոն, ընտրվում է մի մանկավարժ, ով նույն դպրոցից է, կամ այդ երեխային ճանաչում է կամ հենց իր մանկավարժն է, բնականաբար երեխան չի ցանկանում մանկավարժի մոտ ամեն ինչը պատմել:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

«Ըստ կարգի, մասնակցություն ունենում է մանկավարժը, որի իմաստը ես չեմ տեսնում: Ընդորում, կարգավորված չէ, թե մանկավարժն ինչ պետք է անի»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Այսպիսով, պրակտիկայում բավականին խնդրահարույց է մանկավարժների մասնակցությունը հարցաքննություններին, քանի որ մի կողմից՝ դպրոցական ուսուցիչների ներգրավումը հետագայում երեխայի մոտ կրկնազոհացման ռիսկերն է ավելացնում և կաշկանդում է նաև հարցաքննության ընթացքը, մյուս կողմից՝ մանկավարժներն իրենք չունեն իրենց դերի և նշանակության վերաբերյալ որևէ հստակ կանոնակարգ, հետևապես, նրանց մասնակցությունն ապահովում է օրենքի տարրի ձևական իրականացումը՝ առանց երեխայի շահի ապահովման:

Փորձագետներն անդրադարձել են նաև հարցաքննության ընթացքում մեկ այլ անձի մասնակցության խնդրահարույց լինելու հարցին: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ սահմանված կարգով անչափահաս վկայի կամ տուժածի հարցաքննությունը պետք է իրականացվի օրինական ներկայացուցչի ներկայությամբ: Օրինական ներկայացուցչի և անչափահասի միջև հնարավոր հակասությունների, օրինական ներկայացուցչի կողմից անչափահասի շահերին հակասող վարքագծի դրևսորման դեպքում կարգավորված չէ օրինական ներկայացուցչի հեռացման կամ հնարավոր կոնֆլիկտի լուծման կարգը:

«Տուժած երեխաների հարցաքննությունը կամ այլ քննչական գործողությունն իրականացվում է օրինական ներկայացուցչի ներկայությամբ, սակայն, արդյո՞ք նա ունի անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, որը կօգնի տուժած երեխայի հարցաքննության գործընթացին»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Անդրադառնալով երեխայի մասնակցությամբ վարույթին, շահագրգիռ կառույցների ներգրավվածության հարցին՝ փորձագետների որոշ մասը ոչ արդյունավետ է համարել նաև խնամակալության և հոգաբարձության մարմինների ներգրավվածությունը.

«Շատ են լինում դեպքեր, երբ խնամակալության ու հոգաբարձության մարմիններն են ներգրավվում որպես ներկայացուցիչներ: Նրանք գրեթե աշխատանք չեն տանում, որովհետև նրանք չեն վարձատրվում են, մեղմ ասած, ձևական մասնակցություն է ապահովվում»»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Այսպիսով, հարցաքննության մասնակիցների ներգրավման վերաբերյալ մոտեցումների ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ պրակտիկայում ձևավորված խնդիրները պահանջում են ինչպես օրենսդրական փոփոխություն, այնպես էլ գործնական ընթացակարգերի կիրառում:

Մասնավորապես, անհրաժեշտ է՝

• հոգեբանի ներգրավումը, հոգեբանի մասնակցության հստակ ընթացակարգերի սահմանումը,

• մանկավարժի մասնակցության դեպքում՝ համապատասխան մանկավարժների վերապատրաստումը, նախնական իրազեկումը, նրանց մասնակցության և դերի հստակ կանոնակարգումը,

• օրինական ներկայացուցիչների մասնակցության պարագայում ծնողների իրազեկումն իրենց դերի վերաբերյալ, երեխաների և ծնողների շահերի հակասության դեպքում՝ այլընտրանքային լուծման հնարավորության առաջադրումը,

• խնամակալության և հոգաբարձության մարմինների, հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ նրանց դերի կանոնակարգումը, նրանց աշխատանքի գործունեության խթանումը, մասնագիտացված վերապատրաստումներ ՀՀ-ի համար հարցաքննություններին մասնակցության առումով՝ ի նպաստ երեխայի շահերի արտացոլման:

• հաշվի առնելով հարցաքննությունների թվի կրճատման անհրաժեշտությունը և տարբեր գերատեսչությունների շրջանակում իրականացվող հարցաքննությունների պահանջը՝ անհրաժեշտ է առաջ քաշել և քննարկել միասնական մոտեցման տարբեր երկրներում առկա մոդելների կիրառումը, հարցաքննությունների տեսաձայնագրումը:

Փորձագետների կողմից մեկ այլ հիմնախնդիր է դիտարկվել՝ տուժածի ու ամբաստանյալի միմյանց ծանոթ լինելն ու դրա հետևանքով ի հայտ եկող դժվարությունները, մասնավորապես՝ այս պարագայում առերեսման գործընթացի բարդությունը և նոր կառուցակարգ սահմանելու անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303 որոշման 51-րդ կետի պահանջն է քրեական դատավարության օրենսգրքով անչափահասի մասնակցությամբ առերեսման և այլ քննչական գործողությունների հատուկ կարգի սահմանումը, մասնավորապես, հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը բացառելու համար:

Սույն անհրաժեշտությունը փորձագետները հիմնավորել են տարբեր իրավիճակներում առաջ եկած խնդիրներով.

«Մեկ այլ դժվարություն է, երբ տուժածն ու մեղադրյալն իրար ծանոթ են եղել, ու լինում է մարզերում դեպքեր, երբ չեն ցանկանում բարձրաձայնել, քանի որ չեն ուզում մեղադրյալին ենթարկեն պատասխանատվության: Կարևոր խնդիր է նաև առերեսման խնդիրը. միմյանց ծանոթ մարդկանց առերեսման արդյունավետությունը 10%-ն է»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Փորձագետներն անդրադարձել են միջնորդավորված առերեսման պրակտիկային, որը կարող է շատ արդյունավետ լինել, սակայն դեռևս բավականին քիչ է կիրառվում:

«Շատ քիչ է արվել Հայաստանում միջնորդավորված առերեսում, երբ տուժածն ու ամբաստանյալը չեն նստում իրար դեմ. չի կարելի իրար դիմաց նստած լինեն իրենք, կողքի սենյակում կարող է լինել տեսախցիկ, էկրան, բոլոր շփվեն այդ ձևով:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Կարևորելով քրեական վարույթի ավարտից հետո երեխայի կենսագործունեության և առողջ մանկության հնարավորության հարցը՝ առաջ է քաշվել բոլոր գործընթացներում կոնֆիդենցիալության, էթիկական սկզբունքների պահպանման հիմնախնդիրը:

Հատկապես, փոքր համայնքներում առանձնակի կարևորվում է այս հարցերի պահպանումը՝ երեխաների կրկնակի զոհականացումը բացառելու նպատակով: Այս առումով կարևորվել է անչափահասների գործերով դատական դռնփակ նիստեր անցկացնելու կարևորությունը (ՀՀ ՔԴՕ 16-րդ հոդված. Դատական քննության հրապարակայնություն շրջանակ - Քրեական գործերի դատական քննությունը բոլոր դատարաններում դռնբաց է):

Դռնփակ քննությունների օրենքով սահմանված հիմքերում անդրադարձ չկա երեխաներին: Այս առումով անչափահասների գործերով այս հարցին հատուկ մոտեցում գոյություն չունի: Փորձագիտական մոտեցման համաձայն՝ անչափահասի վերաբերյալ վարույթի քննությունը դատարանում պետք է դռնփակ անցկացվի:

Անչափահասների անձնական կյանքի իրավունքը պահանջում է, որ դատավարության բոլոր մասնակիցները, որոնք ապահովում են դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից նշանակված միջոցների կիրառումը, իրենց շփումներում գաղտնի պահեն անչափահասի վերաբերյալ տեղեկությունները: Անչափահաս մեղադրյալի մասին տեղեկատվությունը պետք է գաղտնի և փակ պահվի երրորդ անձանց համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք անմիջականորեն ներգրավված են նախնական կամ դատական քննության փուլում, այդ թվում՝ դատավճիռ կայացնելիս: ՀՀ-ում անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս պետք է գաղտնիության պահպանման պարտականություն դրվի անչափահասի գործերով դատավարությանը ներգրավված բոլոր անձանց վրա:

Գաղտնիության ոչ լիարժեք ապահովումը կարող է հանգեցնել մի շարք հիմնախնդիրների, օրինակ առաջնային սոցիալական օղակներում՝ ընտանիքում, դպրոցում, համայնքում, երեխայի նկատմամբ բացասական դիրքորոշումների ձևավորման.

Այսպիսով, փորձագիտական կարծիքի վերլուծությունը ցույց է տվել, որ գործող օրենսդրությունը համակարգային ձևով անդրադարձ չի կատարում անչափահաս տուժածների մասնակ-

գությամբ քննչական, ինչպես նաև դատավարական այլ գործողությունների կատարման կարգին, չի սահմանում դրանց կատարման առանձնահատկությունները, ինչպես նաև գրեթե բացակայում են անչափահաս տուժածների իրավունքների իրականացման այնպիսի լրացուցիչ երաշխիքներ, որոնք միտում կունենան բացառելու կամ գոնե նվազեցնելու դատավարական գործողությունների արդյունքում անչափահաս վկաներին կամ տուժածներին հասցվող ցանկացած բացասական ազդեցություն:

Անչափահասների մասնակցությամբ միայն հարցաքննության՝ որպես քննչական գործողության իրականացման ընթացքում է օրենսդիրը պարտադիր համարում մանկավարժի մասնակցությունը. ոչինչ չի խոսվում մյուս քննչական գործողությունների, մասնավորապես, առերեսման, ճանաչման ներկայացնելու մասին: Ավելին, ՀՀ ՔԴՕ-ը չի պարունակում նորմեր՝ դատական քննության փուլում անչափահաս տուժածի կամ վկայի հարցաքննության ընթացքում մանկավարժի մասնակցության վերաբերյալ:

Առկա են մի շարք հիմնախնդիրներ՝ անչափահաս տուժածների կամ վկաների հարցաքննությունների քանակի հնարավոր նվազեցման, հարցաքննությունների տեսաձայնագրման և այդ տեսաձայնագրությունները քրեական դատավարության մյուս փուլերում հնարավորության դեպքում օգտագործելու, քննչական գործողությունները հնարավորության դեպքում նրանց բնակության վայրում կատարելու, անչափահաս տուժածին ապացույցներ հետազոտելիս դատական նիստերի դահլիճից ժամանակավորապես հեռացնելու, ինչպես նաև անչափահաս վկային կամ տուժածին կրկին չվնասելուն միտված միջազգայնորեն ընդունելի մի շարք այլ ինստիտուտների վերաբերյալ:

Ուսումնասիրության արդյունքում վեր հանված հիմնախնդիրները դիտարկվել են որպես քրեական դատավարության ընթացքում առկա դժվարություններ, որոնք հակասում են երեխայի լավագույն շահի սկզբունքին և հնարավորություն չեն տալիս ձևավորելու այլընտրանքային կառուցակարգեր:

Рубаніївська дворозрядна гімназія (дівочогімназія) , яка мала трьохрічний
попередній підготовчий підклас
Оплата навчання та харчування
Оплата навчання
Оплата навчання та одежа
Оплата навчання та одежа
Оплата навчання та одежа
Оплата навчання
Оплата навчання
Оплата навчання

ԳԼՈՒԽ 2.5 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս Հայաստանում տուժած երեխաների խնդիրներին արձագանքման մեխանիզմները դեռևս ձևավորված չեն և համապատասխան ծառայությունները ձևավորման սկզբնական փուլում են: Ուստի, այդ ուղղությամբ համապարփակ աշխատանքների և միասնական մոտեցումների կարիք կա: Տուժած երեխաների հետ առնչություն ունեցող կառույցների համաձայնեցված մոտեցումը կնպաստի ոլորտի զարգացման և երեխայի լավագույն շահի պաշտպանությանը:

Այդ առումով ոլորտի փորձագետները վեր են քաշել բազմաթիվ խնդիրներ և կարիքներ, որոնք լրջագույն ուշադրության և նորովի մոտեցումների կարիք ունեն:

Առհասարակ, փորձագետների մեծամասնության կողմից առաջ է քաշվել հանցագործությունից տուժած երեխաների կարքներին համապարփակ արձագանքող կենտրոնի (Բառնաուսի /Barnahus/) ստեղծման գաղափարը, կամ որևէ կառույցին կից համապատասխան ծառայությունների ներդրումը.

> *«Բառնաուսը բավականին հետաքրքրական մոդել է. այն տուժած և վկա երեխաների քննության և նախաքննության գործընթացներում ներգրավելու երեխեայակենտրոն մոտեցումն է, որն իրականացվում է մեկ վայրում»:*
>
> *Մեջբերում փորձագետի խոսքից*
> *ՀԿ ներկայացուցիչ*

Փորձագետների կողմից ծառայությունների մատչելիության հարցը դիտարկվել է երեխայի բազմազան կարիքների արձագանքման տեսանկյունից, որոնց հիման վրա առանձնացվել են իրավական, սոցիալական, հոգեբանական ծառայությունների առկայության և դրանց մատչելիության խնդիրները:

Փորձագիտական կարծիքի ամփոփման հիման վրա առանձնացվել է հանցագործությունից տուժած երեխաների կարիքների հիման վրա հետևյալ ծառայությունների անհրաժեշտությունը՝

- **Իրավական ծառայություններ**

Միջազգային չափանիշներն անչափահաս տուժածների և վկաների համար պահանջում են արդյունավետ իրավաբանական օգնության հնարավորություն՝ առավելագույնս հաշվի առնելով երեխայի շահերը: Արդարադատության իրականացման ընթացքում արդար դատաքննության սկզբունքի ապահովման կարևոր պայմաններից մեկը համապատասխան իրավական օգնության և իրավական խորհրդատվության տրամադրումն է:

Ընդհանուր առմամբ, անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը հիմնարար իրավունք է, որից կախված են երեխայի իրավունքների հետագա պաշտպանության մի շարք կարևորագույն հարցեր:

ՀՀ ՔԴՕ սահմանում է տուժածների և վկաների իրենց ցանկությամբ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Համաձայն ՔԴՕ 10-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն:

Սակայն իրավական կարգավորման տեսանկյունից որոշ փորձագետների կողմից կարևոր խնդիր է համարվում այն, որ երեխան ինքնին չի կարող դիմել իրավապահ մարմիններին առանց ծնողների, հատկապես, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ շատ անգամ երեխաները չեն ուզում իրենց հետ կատարվածի մասին պատմել ծնողներին:

Մյուս կողմից ուշադրության արժանի խնդիր է այն, որ տուժած երեխաների համար այս ծառայությունը պարտադիր և անվճար չէ. հանրային պաշտպանի ծառայությունը պարտադիր չի և գործնականում կան դեպքեր, երբ ծնողը հրաժարվում է վճարովի փաստաբանական ծառայություններից, որի արդյունքում երեխան զրկվում է իրավական օգնություն ստանալու իր իրավունքից:

Բանն այն է, որ ՀՀ փաստաբանության մասին օրենքի 41 հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետի համաձայն Հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում միայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց: Մնացած դեպքերում առկա չեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխավորող օրենսդրական նորմեր: Մինչդեռ միջազգային չափանիշների համաձայն արդարադատության հետ շփումներում երեխաներին պետք է տրամադրվի հասանելի իրավաբանական օգնություն և ներկայացուցչություն, եթե շոշափվում են նրանց շահերը: Եթե առկա է կամ կարող է առկա լինել շահերի բախում երեխաների և նրանց ծնողների կամ այլ կողմի շահերի միջև, երեխաները պետք է ունենան իրենց սեփական խորհրդատուն և ներկայացուցիչը, ով հանդես է գալիս իրենց անունից[7]:

• **Հոգեբանական ծառայություններ**

Ընդհանուր առմամբ, փորձագետների կողմից հանցագործության տուժած երեխաներին համար լավագույն շահի ապահովման նպատակով հոգեբանական աշխատանքի անհրաժեշտությունը դիտարկվում է մինչ դատավարական, դատավարական, հետդատավարական փուլերում: Բացի այդ, անհրաժեշտ հանգամանք է համարվում երեխաների հետ աշխատող քննիչների, դատախազների, դատավորների մասնագիտացումը և երեխաների հարցաքննության առանձնահատկությունների վերաբերյալ վերապատրաստումը:

Շեշտադրվում է նաև մինչդատական և դատական փուլերում նեղ մասնագիտացմամբ հոգեբանների ներգրավվածության հարցը, որը ենթադրում է ոչ միայն մասնակցություն, այլ աջակցություն հարցաքննության ընթացքում: Անչափահաս վկայի կամ տուժածի հարցաքննության ընթացքում հոգեբանը, ելնելով անչափահասի լավագույն շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, նախագահողի թույլտվությամբ իրավասու լինի կարծիք կամ դիրքորոշում հայտնել հարցաքննության բնականոն ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև՝ հարցեր տալ ցուցմունք տված անչափահասին:

[7] Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդված art. 40 (2) (b) (ii), http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503 Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 10 ընդհանուր մեկնաբանություն, 49-50 կետեր, file:///C:/Documents%20and%20Settings/Narine%20Alexsanyan/Desktop/4670fca12.pdf, Երեխայի համար նախատեսված արդարադատության Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ուղենիշներ, 101-102 կետեր, https://rm.coe.int/16804b2cf3

Առավել հրատապ է դիտարկվել համապատասխան որակավորում և մասնագիտական փորձ ունեցող հոգեբանի մասնակցությունը սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով, անչափահաս վկայի կամ անչափահաս տուժածի մտավոր զարգացման մեջ հետ մնալու, անչափահաս վկայի կամ անչափահաս տուժածի հոգեկան խանգարում ունենալու դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինը գտնում է, որ հոգեբանի մասնակցությունը բխում է անչափահասի լավագույն շահերից:

«Ներկայումս քննչական կոմիտի կողմից իրականացվող երեխայի հարցաքննություններում ներգրավվում են հոգեբաններ, բայց կարիք կա ներգրավվածությանը զուգահեռ հստակեցվի իրենց դերն այդ գործընթացում»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Հարցումներին մասնակցած փորձագետների մեծամասնության կողմից կարևորվում է նաև հանցագործության տուժած երեխայի հետ մինչ հարցաքննությունը հոգեբանի կողմից առանձին աշխատանքը և եզրակացության ներկայացումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանցագործության հետևանքով երեխան գտնվում է հուզական անկայուն և ոչ ադեկվատ վիճակում, ապա անհրաժեշտություն կա նախնական հոգեբանական աշխատանքի, որպեսզի երեխայի հետ հարցաքննության ընթացքում երեխան հարցերին պատասխանի հնարավորինս օբյեկտիվ՝ զերծ պահվելով նրան կրկնազոհացումից:

«Երեխաները գալիս են վախեցած, որովհետև նրանք պատմելու են գուցե մի բան, որը տանը ասել են՝ ոչ մեկի չպատմես: Կամ էլ հանցագործն է վախեցրել իրեն չպատմելու, եթե պատմի՝ ինչ հետևանքներ դա կարող է ունենալ, այսինքն կան այդ հոգեբանական խոչընդոտները»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Ընտանիքի, համայնքի, մերձավոր ազգականների կամ հենց մեղադրյալի կողմից սպառնալիքները կամ նախազգուշացումները հաճախ երեխաների մոտ ձևավորում են վախ, մեղավորության զգացում, տագնապներ, իրավիճակի վերաբերյալ տարբեր, երբեմն աղավաղված պատկերացումներ:

«Քրեական գործերից մեկում իրավիճակ էր ստեղծվել, որ ծնողները մեկուկես ամիս իրար չեն տեսել, բայց երեխային այնքան են ներշնչել, որ մոր մոտ առկա կապտուկները պայմանավորված են հոր կողմից իրականացված բռնությունների արդյունքում, որ երեխան հենց այդպես էլ նշում էր այն պարագայում, երբ որ մեկուկես ամիս չշփվելը ինքին բացառում էր կապտուկները այդ անձի կողմից պատճառելու հանգամանքը»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Միևնույն ժամանակ կարևորվեց մասնագիտացված հոգեբանների, սոցիալական աշխատողների անհրաժեշտությունը, քանի որ գործնականում տուժած երեխայի հետ աշխատանքը ենթադրում է նեղ մասնագիտական գիտելիքներ, հմտություններ և իրավական համակարգի իմացություն:

«Մենք պիտի կարողանանք պատրաստել հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, որոնք քրեական գործի շրջանակում կկարողանան աջակցություն ցուցաբերել և՛ հանցագործություն կատարած անձին, և՛ տուժածին միաժամանակ»:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

Հոգեբանական ծառայությունը երեխայի հետ կարևորվում է նաև դատավարական գործընթացներից հետո, քանի որ երեխաները որոշ դեպքերում ստիպված են փոխել բնակության վայրը, դպրոցը, երբեմն համայնքում առկա է պիտակավորում, որոշ դեպքերում ողջ ընտանիքը կարիք ունի հոգեբանական աջակցության և վերականգնողական ծառայությունների ապահովման:

• Սոցիալ-տնտեսական ծառայություններ

Հետազոտությունը ցույց է տվել, որ հանցագործությունից տուժած երեխաների զգալի մասը սոցիալապես անապահով ընտանիքներից են և ունեն լուրջ տնտեսական դժվարություններ, որն ազդեցություն է թողնում երեխայի՝ գործին մասնակցության և պաշտպանության վրա: Փորձագետները նշել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ վարույթ իրականացնող մարմին ներկայանալու տրանսպորտային ծախսի բացակայությունը, վարույթի ընթացքում տարբեր մարմիններ ներկայանալու հարցը, ինչն ուղեկցվում է ֆինանսական դժվարություններով: Խնդիրն առավել արդիական է հատկապես գյուղական համայնքներում, երբ տուժածը պետք է ներկայանա մարզային բաժանմունք, դատարան, որի համար անգամ տրանսպորտի գումարի խնդիր ընտանիքը չի կարողանում լուծել: Այս առումով փորձագետները կարևորում են համայնքում սոցիալական աշխատողի, պետական և հասարակական սոցիալական ծառայությունների աջակցության հասանելիությունը, որն այս պահին առկա չէ՝ պայմանավորված երկու հանգամանքով: Ըստ փորձագետների, երեխաների կրկնազոհացմանը նպաստող գործոնները պետք է հաշվի առնվեն և հասցեագրվեն հենց համայնքային ծառայություններից կողմից: Դրանց շրջանակում առանձնացվում է ընտանիքի անապահովությունը, և անբարենպաստ լինելու հանգամանքը, երեխայի հաշմանադամություն ունենալը, հատկապես՝ մտավոր հետամնացություն, երեխայի մոտ ինքնուրույնության, ինչպես նաև ինքնապաշպանության մեխանիզմների և սեփական անձի անձեռնմխելիության վերաբերյալ իմացության բացակայությունը: Այս պարագայում շատ կարևոր է, որպեսզի համայնքային ծառայությունները իրականացնեն վաղ բացահայտում և ծառայությունների տրամադրում, ինչը կապահովի նաև հանցագործությունների կանխարգելում:

Սոցիալական ծառայություններից օգտվելու առումով կան օրենսդրական և փորձի բացակայության խնդիրներ, և ներկայումս անհրաժեշտ է ընթացող սոցիալական ծառայությունների բարեփոխումների շրջանակում՝ ներառել թիրախային այս խմբին և ապահովել հասցեական աջակցություն:

• Ծնողավարման և ընտանիքին աջակցության սոցիալ-հոգեբանական ծառայություններ

Հետազոտությունը վեր է հանել այն խնդիրը, որ ընդհանուր առմամբ առկա է հանցագործությունները թաքցնելու մոտեցում, երբ ընտանիքն ամեն կերպ փորձում է թաքցնել երեխայի հետ տեղի ունեցածը:

«Կան իրավիճակներ, երբ երեխայի ծնողները նրան չեն ցանկանում բերել ոստիկանության շենք, ասում են, որ ամբողջ բակը պետք է տեսնի, որ մենք մտնում ենք ոստիկանության բաժին, որը որոշակի խոչընդոտներ է առաջացնում»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Որոշ դեպքերում, ծնողները հրաժարվում են երեխայի մասնակցությամբ փորձաքննությունների իրականացումից՝ պատճառաբանելով, որ երեխայի վրա այդ ամենը բացասական հոգեբանական ազդեցություն է ունենում: Ծնողների կողմից նման մոտեցումը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը, մյուս կողմից ոչ միշտ է բխում երեխայի լավագույն շահից, քանի որ հանցագործությունը թաքցնելը կարող է բերել հետագա հանցագործությունների ռիսկի: Որպես խնդիր, նշվել է նաև ընտանիքի իրավագիտակցության ցածր մակարդակը, ծնողավարման տարրական հմտությունների պակասը կամ բացակայությունը, երեխայի անտեսումը, ինչը հաճախ նպաստում է երեխայի զոհականացմանը.

«Մայրն ունի դուստր, ապրում է անկանոն սեռական հարաբերությամբ: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ մեծամասամբ կա՛մ այդ մոր ընկերները, կա՛մ ընկերոջ ընկերներն ունենում են սեռական հարաբերություններ այդ երեխաների հետ, ինչն արդեն արտացոլվում է քրեական գործում»:

Մեջբերում փորձագետի խոսքից
Պետական կառույցի ներկայացուցիչ

Փորձագետների կողմից լուրջ խնդիր է առաջ քաշվել նաև այն, որ հատկապես այն դեպքում, երբ հանցագործությունը կատարվել է ընտանիքի ներսում, ծնողները ստիպում են երեխաներին լռել կատարվածի մասին: Այդօրինակ դեպքեր են վկայակոչվել և՛ փորձագետի կողմից, և՛ դեպքի ուսումնասիրության շրջանակում. երեխայի նկատմամբ սեռական ոտնձգություն է կատարում խորթ հայրը, իսկ մայրը փորձել է թաքցնել: Մյուս կողմից էլ կատարվածը թաքցնելու պատճառներից է վախը, ամոթը, համայնքի կողմից պիտակավորվելու տագնապները: Վկայակոչվել են դեպքեր, երբ տուժած երեխայի ընտանիքը տվյալ թաղամասից բնակարանը վաճառել և տեղափոխվել է այլ վայր, որպեսզի կատարվածի մասին հարևանությունը տեղյակ չլինի:

«Երեխաների ծնողներն էլ ունեն այդ իրավագիտակցության և գրագիտության պակասը, իրենց երեխաներին ստիպում են լռել, թեկուզ սեռական բնույթի հանցագործությունների դեպքում....»:

Մեջբերում փորձագետի խոսքից
ՀԿ ներկայացուցիչ

Ընտանիքում կատարվող հանցագործությունների լատենտայնությունը հաշվի առնելով՝ կարևորվում է համայնքային ծառայությունների և համայնքի կողմից խնդրի վաղ հայտնաբերման և արձագանքման մեխանիզմների գործարկումը, մասնավորապես՝ սոցիալական ծառայությունների կողմից հայտնաբերման դեպքում այդ մասին հաղորդումն իրավապահ մարմիններին: Նման աշխատանքը ոչ միայն կապահովի միջամտություն կոնկրետ գործերին, այլ նաև էապես կնվազեցնի երեխաների նկատմամբ հանցագործությունների թիվը:

Ծնողների իրավագիտակցության, այդ թվում նաև՝ երեխաների նկատմամբ բռնության կանխման առումով կարևորվել է համայնքերում, դպրոցներում ծնողավարության դասընթացների իրականացումը: Ընդ որում, այս միջոցառումները ոչ թե պետք է լինեն մեկանգամյա, այլ շարունակական, որպեսզի ձևավորեն նաև կայուն վարվելակերպ բռնության, հանցագործության նկատմամբ հանդուրժողականության:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ելնելով հետազոտության հիմնական եզրակացություններից առաջարկվում է՝

• Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների իրավունքների պաշտպանության ջատագովություն, նրանց շահերի պաշտպանություն և դրան ուղղված միջոցառումների ներառում պետական քաղաքականության օրակարգում,

• անչափահաս տուժածների և վկաների հարցաքննություններում, նրանց մասնակցությամբ փորձաքննություններում և այլ գործողություններում աջակցող մասնագետների (հոգեբան, սոցիալական աշխատող) մասնակցություն և վերջիններիս մասնակցությունը կանոնակարգող կառուցակարգերի սահմանում, իրազեկում, համապատասխան որակավորում ունեցող հոգեբանների և սոցիալական աշխատողների վերապատրաստումներ,

• անչափահասների մասնակցությամբ վարույթներում ներգրավված քննիչների, դատախազների և դատավորների շարունակական մասնագիտական վերապատրաստումներ,

• քրեական գործի քննության շրջանակներում ԽՀՀ-ների դերի հստակեցում, նրանց մասնակցության արդյունավետության բարձրացման ապահովում՝ ի շահ երեխայի,

• մանկավարժի մասնակցության դերի վերանայում և լրացուցիչ ուսումնասիրություն, առանձին դեպքերում մանկավարժի փոխարինման պահանջի սահմանում՝ ելնելով երեխայի լավագույն շահից,

• հասարակության իրավագիտակցության, իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, երեխաներին հանցագործություններից պաշտպանելու իրազեկման և կանխարգելման միջոցառումների իրականացում, ծնողավարման դասընթացների իրականացում,

• անչափահասների շրջանում սեռական դաստիարակության և սեռական անձեռնմխելիության հարցերի վերաբերյալ իրազեկման և կրթական դասընթացների իրականացում,

• հանցագործությունից տուժած երեխաների հետ քրեադատավարական գործընթացները միասնական իրականացնելու և հասանելի ծառայություններ մատուցելու մասնագիտացված կենտրոնի ստեղծման անհրաժեշտության քննարկում՝ հիմք ընդունելով արդեն իսկ առկա միջազգային առաջատար փորձը,

• ՔԴՕ-ով անչափահասների գործերով դռնփակ դատական քննություն անցկացնելու կանխավարկածի սահմանում: Դռնբաց դատական քննություն իրականացնելու դեպքում, անչափահասի վերաբերյալ անձնական տեղեկությունների գաղտնիության ապահովում, լրատվության միջոցներով անչափահասի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը, լուսանկարի ցուցադրումը և անչափահասին նույնականացնող այլ նյութերի ներկայացումը արգելող սանկցիաների սահմանում և կիրառում,

• վերանայել ներպետական օրենսդրությունը, ընթացակարգերն ու պրակտիկան՝ ապահովելով անչափահաս տուժածների և վկաների պաշտպանությանն ուղղված միջազգային չափանիշների ներառումը ՀՀ օրենսդրու-

թյունում: Սա ենթադրում է տուժածների և վկաների պաշտպանության մասին հատուկ օրենքի ընդունում՝ հիմնված վկաների պաշտպանության տիպային օրենքի վրա, որը պարունակում է տուժածների և վկաների պաշտպանության նվազագույն երաշխիքները,

• անչափահասների վերաբերյալ անձնական տեղեկատվության գաղտնիության պահպանման պարտականության սահմանումը դատավարությանը ներգրավված բոլոր անձանց համար: Անչափահասների շահերի պաշտպանությունից և ապագայում սոցիալական վերաինտեգրմանը նպաստելու մտահոգությունից ելնելով՝ պետք է արգելվի նաև լրատվության միջոցներով հրապարակել անչափահասի անունը, լուսանկարը կամ անձնական կյանքի վերաբերյալ որևէ այլ տեղեկություն,

• անչափահասների դեպքում ողջամիտ ժամկետները պետք է որոշվեն ելնելով երեխայի լավագույն շահից՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրանց կրթական մակարդակին ու հոգեբանական զարգացվածությանը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հետաքննության և նախաքննության մարմիններն ու դատավորները պետք է քայլեր ձեռնարկեն, որպեսզի անչափահասների գործերով դատավարությունն ավարտին հասցվի ողջամիտ ժամկետներում: Առաջին հերթին, պետք է օրենքով սահմանվեն անչափահասների գործերով դատավարության առավելագույն տևողությունը, ինչպես նաև սահմանված ժամկետների երկարացման դեպքերն ու պայմանները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ չնայած երեխաների պաշտպանության համակարգի զարգացմանը և ընթացիկ բարեփոխումներին, հանցագործությունից տուժած երեխաների իրավունքների պաշտպանության հարցը դեռևս ամբողջությամբ գնահատված և ներառված չէ պետական քաղաքականության օրակարգում: Սոցիալական պաշտպանության, քրեաիրավական օրենսդրության և առկա ռազմավարությունների շրջանակում դրված են հանցագործությունից տուժած անձանց, մասնավորապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության կառուցակարգեր, երաշխիքներ, առկա ծառայությունները հասանելի և հասցեական չեն կյանքի այս իրավիճակում հայտնված բոլոր երեխաներին:

Ելնելով խնդրից՝ երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2022թթ. ռազմավարական ծրագրում նախատեսվել է իրականացնել սույն բնույթի հետազոտություն և զարգացնել հանցագործությունից տուժած երեխաների իրավունքների պաշտպանության և ծառայությունների հայեցակարգ: Այնուամենայնիվ, ռազմավարությունը միակ իրավական ակտն է, և կարիք կա, որպեսզի խնդիրը ներառվի տարբեր գերատեսչությունների օրակարգ՝ հասցեագրելու տարբեր մարմինների կողմից այս կատեգորիայի երեխաների իրավունքների պաշտպանության տարբեր խնդիրները:

Միևնույն ժամանակ հետազոտությունը ցույց է տվել, որ խնդիրների գործընթացներին առնչվող տարբեր մարմիններ բախվում են առկա դժվարություններին և բավականին հասունացել է դրանց լուծման համար օրակարգ ձևավորելու պահանջը: Փորձագետների զգալի մասն իր առօրյա աշխատանքում հանդիպում է առկա օրենսդրական և գործնական բացերին, միևնույն ժամանակ ջատագովն է, որպեսզի առկա խնդիրները լուծում ստանան: Այնուամենայնիվ, հանցագործությունից տուժած երեխաների իրավունքների պաշտպանության խնդրի գիտակցումը դեռևս նեղ մասնագիտական շրջանակում է, և չի առնչվում հանրության լայն շերտերին, քանի որ ընդհանուր առմամբ առկա է խնդրի նկատմամբ անտեսման, թաքցնելու երևույթ: Որպես կանոն, հանցագործությունից տուժած երեխաները և իրենց ընտանիքները բավականին խոցելի են և ունակ չենք բարձրաձայնելու այն դժվարությունների մասին, որոնցով անցել են: Այդ առումով հսկայական անհրաժեշտություն կա, որպեսզի խնդիրը լայնամասշտաբ քննարկման և իրազեկման առիթ դառնա, որպեսզի ձևավորվեն և առավել ուժեղացվեն կանխարգելման ծառայությունները, ձևավորվի մասնագիտական ներուժ, համայնքներն ունակ լինեն ձավորելու կանխարգելման և միջամտության կառուցակարգեր: Այս առումով կա նաև մշակութային սահմանափակումներ, որոնք հաճախ հանգեցեցնում եմ խնդիրը թաքցնելուն և անտեսելուն:

Այսպիսով, եթե փորձենք դասակարգել ներկայացված խնդիրների հիմնական շարքը, ապա առաջին հիմնական հարցը տուժածի կարգավիճակի, մասնավորապես՝ երեխաների կարգավիճակի պաշտպանության երաշխիքների իրավական հիմքերի ստեղծումն է ՔԴՕ-

ում, համապատասխան այլ իրավական ակտերում, մեթոդական ուղեցույցերում: Օրենսդրությամբ պաշտպանության միջոցների և երաշխիքների սահմանումը հիմնարար պայման է դրանից բխող կառուցակարգեր զարգացնելու, այդ թվում՝ մասնագիտական ներուժը դատավարության և քննչական գործընթացներում ի շահ երեխայի՝ մասնակից դարձնելու առումով:

Երկրորդ հիմնական խնդիրը մասնագիտական անձնակազմի ձևավորումն է: Այս ուղղությամբ արդեն իսկ իրականացվել են քայլեր, մասնավորապես, ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպվել են քննիչների վերապատրաստումներ և առկա է շարունակական մասնագիտացման պատրաստակամություն: Այնուամենայնիվ, մասնագիտացված անձնակազմը ներառում է աշխատակազմի վերապատրաստումները, ինչպես նաև՝ աջակցող անձնակազմի վերապատրաստումներ, դատական սոցիալական աշխատողների և հոգեբանների ինստիտուտի ներդրում, ինչը կնպաստի միջգերատեսչական թիմերի ձևավորմանը, և յուրաքանչյուր կառույց կկարողանա լավագույն հասցեական արձագանքել երեխայի կարիքներին:

Օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով, յուրաքանչյուր փուլում նախատեսված մի շարք գործողություններ համապատասխանեցված չեն երեխայի կարիքներին, տարիքային և մտավոր զարգացման առանձնահատկություններին: Սա պահանջում է զգայուն ընթացակարգերի ներդրում, մասնավորապես, հարցաքննությունների թվի հնարավորինս կրճատում, դատավարության ընթացքում ծառայություններ, վերականգնողական ծառայությունների դատավարությունից հետո:

Խնդիրների մյուս մասը վերաբերում է առավել լայն ծառայությունների հասցեականությանը, մասնավորապես, հանցագործությունից տուժած անձանց համար ծառայությունները մատչելի դարձնելու, սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական աջակցություն ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով ցածր իրազեկվածության աստիճանը, սոցիալ-տնտեսական իրավիճակը, համայնքում՝ խնդրի նկատմամբ դատապարտող և ոչ թե աջակցող լինելու հանգամանքը, այս երեխաները դառնում են առավել խոցելի, առավել անպաշտպան: Եթե հանցագործությունը կատարվել է փոքր համայնքում, երեխաների համար առկա է պիտակավորման ռիսկ, առկա է կրկնազոհացման վտանգ: Հատկապես, եթե հանցագործությունը կատարվել է ընտանիքի ներսում, մի կողմից առկա է հանցագործությունը թաքցնելու ճնշում, մյուս կողմից առկա են դեպքեր, երբ երեխան դեպքից հետո կրկին վերադարձել է ընտանիք՝ նույն անդամի հետ համատեղ բնակության: Այս առումով, ակնհայտ է երեխայի իրավունքների պաշտպանության առաջնային օղակի ՀՀ-ների գործունեության հասցեականության ապահովում, նրանց դերի հստակեցում, հատկապես քրեական գործերով նրանց մասնակցության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը՝ ի շահ երեխայի իրավունքի պաշտպանության: Կարևոր է նաև ծնողների և երեխաների իրազեկվածության բարձրացումը, գործընթացում նրանց իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ որևէ մեկ աջակցող մարմնի առկայություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Փորձագիտական հարցման հարցաշար

Հարգելի գործընկեր,

ՀՀ արդարադատության նախարարությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացնում է ‹‹Երեխաների համար արդարադատության մատչելիության ապահովման նպատակով կայուն համագործակցության ընդլայնում›› ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետազոտություն՝ ուղղված հանցագործությունից տուժած երեխաների կարիքների բացահայտմանը, արդարադատության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության բարելավման նպատակով:

Կարևորելով Ձեր փորձը երեխաների իրավունքների պաշտպանության համակարգում՝ ակնկալում ենք Ձեր մասնակցությունը փորձագիտական հարցազրույցներում:

Հայտում ենք, որ հարցազրույցը անանուն է ու ստացված տվյալները վերլուծվելու են ընդհանրացված տեսքով:

Կանխավ շնորհակալություն:

1. Մասնագետի /անուն, հայրանուն, ազգանուն/:
2. Կառույցը:
3. Հարցվողի պաշտոնը, մասնագիտական ստաժը:

Ընդհանուր հարցեր

4. Ձեր գործունեության շրջանակներում ինչպե՞ս եք առնչվում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանը:
5. Ըստ Ձեզ, ինչպե՞ս է իրականացվում Հայաստանում հանցագործությունից տուժած երեխաների պաշտպանությունը:

Հատուկ հարցեր

6. Ելնելով Ձեր փորձից՝ նկարագրեք մի դեպք, երբ առնչվել եք տուժած երեխաների հետ: Ի՞նչ խնդիրների եք բախվել, ի՞նչ աջակցություն է տրամադրվել և ու՞մ կողմից:
7. Ըստ Ձեզ, որո՞նք են այդ խմբի երեխաների հիմնական կարիքները:
8. Ըստ Ձեզ, հանցագործության հատկապես ո՞ր տեսակների դեպքում են տուժած երեխաները առավել խոցելի: Պայմանավորված դրանով՝ լրացուցիչ ի՞նչ կարիքներ ունեն այդ երեխաները:
9. Ըստ Ձեզ, ո՞ր տարիքի և սեռի երեխաներն են առավել շատ հայտնվում տուժածի կարգավիճակում և ինչո՞վ է դա պայմանավորված:

10. Եղե՞լ են դեպքեր, երբ ծնողը հրաժարվել է աջակցության միջամտությունից և ինչպես եք դուք արձագանքել:

11. Ըստ Ձեզ, որո՞նք են վարույթի ընթացքում, վարույթից հետո տուժած երեխաների իրավունքների պաշտպանության շրջանակներում առաջնային հիմնախնդիրները գործնական և իրավական դաշտում:

12. Ըստ Ձեզ, ի՞նչ կարիքներ ունեն երեխաները դատավարության ընթացքում: Ինչ մասնագետների ներգրավվածության կարիք կա (հոգեբան, մանկավարժ,սոցիալական աշխատող):

13. Ինչպիսի՞ն են տուժած երեխաներին և նրանց ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) քրեական դատավարության գործընթացում իրենց դերի, մասնակցության, իրավունքների վերաբերյալ իրազեկման մեխանիզմն և պրակտիկան:

14. Ըստ Ձեզ, առկա՞ է արդյոք վիճակագրություն տուժած երեխաների առնչությամբ:

15. Ձեր կառույցը վարու՞մ է արդյոք վիճակագրություն տուժած երեխաների առնչությամբ:

Տեղեկատվություն (միջազգային փորձ)

16. Ծանո՞թ եք արդյոք զոհերի պաշտպանության միջազգային փորձին:

17. Եթե այո, ապա, ըստ Ձեզ, ի՞նչ դրույթներ կարող են ներմուծվել ՀՀ օրենսդրություն:

18. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ իրավական կառուցակարգերի և ընթացակարգերի բացակայությունն է խոչընդոտում տուժած երեխաների իրավունքների պաշտպանությանն ու կարիքների աջակցմանը, որոնք պետք է լինեն ՀՀ օրենսդրության մեջ:

Առաջարկություններ

19. Ըստ Ձեզ, ո՞ր կառույցները պետք է ներգրավված լինեն հատկապես տուժած երեխաների հետ աշխատանքում և ի՞նչ դերակատարում պետք է ունենան:

20. Ի՞նչ օրենսդրական փոփոխությունների կարիք կա, որպեսզի բարելավվի տուժած երեխաների պաշտպանության երաշխիքների ապահովման գործընթացը:

21. Ըստ Ձեզ, կա արդյո՞ք տուժած երեխաների հետ աշխատող մասնագետների որակավորման և վերապատրաստման անհրաժեշտություն:

22. Ըստ Ձեզ, ի՞նչ կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտություն կա:

23. Դուք՝ որպես կառույց, ինչպե՞ս եք տեսնում Ձեր մասնակցությունը հանցագործությունից տուժած երեխաների հետ աշխատանքում:

24. Այլ առաջարկություններ:

Կազմի նկարագիրը և հեղինակային իրավունքը՝ Մարիամ, 7տ.,
ներառական դպրոց է հաճախելու: Ցանկանում է դառնալ բժիշկ կամ երգչուհի:
© UNICEF/ Armenia /2016/Pirozzi

Տպաքանակը՝ 300
Տպագրությունը՝ լազերային-թվային, ֆորմատ A4

«Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
հեռախոս 574406, ֆաքս 574453
էլ. հասցե՝ info@lawinstitute.am